

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

### Հարգելի պարոն Արրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Հակոբ Հակոբյանի, Գագիկ Մելիքյանի, Սուքիաս Ավետիսյանի, Լյովա Խաչատրյանի և Էդուարդ Շարմազանովի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» և «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ:

«Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով կարգավորվող ոլորտում առկա են մի շարք հիմնախնդիրներ, այդ թվում՝ զբաղվածության ծառայություններ մատուցող պետական և ոչ պետական կազմակերպությունների միջև համագործակցության ցածր մակարդակը, ոչ պետական կազմակերպությունների գործունեության ցածր արդյունավետությունը: Նշված հիմնախնդիրները և դրանց լուծումները ներառված են զբաղվածության ոլորտի զարգացման

ռազմավարության նախագծում, որում կտրվեն համագործակցության նոր մոտեցումներ, ձևեր ու մեթոդներ: Հայտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից նախկինում քննարկվել, սակայն հավանության չեն արժանացել զբաղվածության ծառայությունների գործունեությունը լիցենզավորելու վերաբերյալ առաջարկությունները: Հայաստանի Հանրապետության կառավարությունը գտնում է, որ զբաղվածության ծառայությունների գործունեությունը լիցենզավորելը չի լուծում նշված խնդիրներից որևէ մեկը, և կոռուպցիոն գործոններ է պարունակում:

Ներկայացված նախագծերի փաթեթը չի բխում Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 8-րդ հոդվածի պահանջներից, որոնց համաձայն Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում են տնտեսական գործունեության ազատությունն ու ազատ տնտեսական մրցակցությունը: Նախագծերի փաթեթը չի բխում նաև Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից որդեգրված` Հայաստանի Հանրապետության գործարար միջավայրի բարելավման քաղաքականությունից, որի համաձայն նախատեսվում է լիցենզավորման ընթացակարգերի պարզեցում և լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների կրճատում:

Ելնելով շարադրվածից` Հայաստանի Հանրապետության կառավարությունը դեմ է «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» և «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերի ընդունմանը: Ինչ վերաբերում է «Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծին, ապա հայտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ևս նախաձեռնել է գործող օրենքում փոփոխություններ նախատեսող նախագիծ: Նախագծի հեղինակներին առաջարկում ենք առայժմ ձեռնպահ մնալ նախագծի քննարկումից և դրան անդրադառնալ Հայաստանի Հանրապետության կառավարության օրենսդրական նախաձեռնության` սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի քննարկմանը ներկայացվելուց հետո:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքների նախագծերի փաթեթը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի առաջին տեղակալ Ա. Պետրոսյանը:

Հարգանքով`

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Նախագիծ  
Պ-857-26.03.2010-ՄՀ-010/0

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

**«Բնակչության զբաղվածության եւ գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասի**

**Հոդված 1.** «Բնակչության զբաղվածության եւ գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին Հայաստանի Հանրապետության 2005 թվականի հոկտեմբերի 24-ի ՀՕ-206-Ն օրենքը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր 15.1 հոդվածով.

*«Հոդված 15.1. Զբաղվածության ծառայություններ մատուցող ոչ պետական կազմակերպությունները*

1. Զբաղվածության ծառայություններ մատուցող ոչ պետական կազմակերպությունների գործունեությունը ենթակա է լիցենզավորման Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

2. Զբաղվածության ծառայություններ մատուցող ոչ պետական կազմակերպությունների գործունեության չափորոշիչները սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից:

3. Զբաղվածության ծառայություններ մատուցող ոչ պետական կազմակերպությունները իրավունք ունեն`

1) գործատուներից, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով օտարերկրյա պետությունների համապատասխան մարմիններից ստանալու տեղեկություններ թափուր աշխատատեղերի, ինչպես նաեւ սպասվելիք կառուցվածքային փոփոխությունների եւ այլ միջոցառումների մասին, որոնց հետեւանքով կարող են տեղի ունենալ աշխատանքից ազատումներ.

- 2) աշխատանք փնտրող անձանց ուղեգրելու գործատուների մոտ՝ համապատասխան թափուր կաշխատատեղերի առկայության դեպքում.
- 3) անձանց ներկայացրած փաստաթղթերի հավաստիությունը պարզելու նպատակով իրավասու մարմիններից ստանալու տեղեկություններ նրանց զբաղվածության, կենսաթոշակ ստանալու եւ պարտադիր սոցիալական ապահովության վճարումներ կատարած լինելու մասին:
4. Զբաղվածության ծառայություններ մատուցող ոչ պետական կազմակերպությունները պարտավոր են՝
- 1) աշխատանքի տեղավորման ծառայություններ մատուցել աշխատանք փնտրող, տվյալ կազմակերպությանը յուրաքանչյուր դիմողի համար.
  - 2) իրականացնել աշխատուժի արտաքին եւ ներքին տեղաշարժի կարգավորմանն ուղղված ծրագրեր, օժանդակել աշխատանք փնտրող անձանց ընտրելու հարմար աշխատանք, իսկ գործատուներին ապահովել անհրաժեշտ մասնագիտություն եւ որակավորում ունեցող մասնագետներով.
  - 3) մատուցել ի տեղավորման ծառայություններ ելնելով միաժամանակ աշխատանք փնտրողների եւ գործատուների շահերից.
  - 4) իրականացնել աշխատանք փնտրող անձանց հաշվառումը.
  - 5) իրականացնել աշխատանք փնտրող անձանց մասնագիտական կողմնորոշման խորհրդատվությունը..
  - 6) կազմակերպել գործազուրկների մասնագիտական ուսուցումը՝ ՀՀ կառավարության սահմանած կարգով.
  - 7) կազմակերպել երկարամյա ծառայության եւ արտոնյալ պայմաններով կենսաթոշակ ստացող աշխատանք փնտրող չզբաղված անձանց վերամասնագիտացումը, որի կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը.
  - 8) աջակցել վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպմանը՝ ապահովելով անհրաժեշտ աշխատուժով.
  - 9) հանրապետական եւ տարածքային համաձայնեցման կոմիտեների ներկայացուցիչներին գրավոր հարցման հիման վրա տրամադրել տեղեկատվություն՝ իրականացրած աշխատանքների վերաբերյալ:ե:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2011 թվականի հունվարի 1-ից:

Նախագիծ  
Պ-857՝-26.03.2010-ՄՀ-010/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ**

**«Լիցենզավորման մասին Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին**

**Հողված 1.** «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի մայիսի 30-ի ՀՕ-193 օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի աղյուսակի «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԵ 17.2-րդ բաժինը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ կետով.

«17.2	ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ								
3. Աշխատանքի տեղավորման կազմակերպում		ԿՍ	Բ	-	-	-	-	Հ	ՎԵ:

**Հողված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2011 թվականի հունվարի 1-ից:

*Նախագիծ*  
Պ-857<sup>2</sup>-26.03.2010-ՍՀ-010/0

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

**«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին**

**Հողված 1.** «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 17.1. կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 17.1.3.-րդ ենթակետով.

«17.1.3. Աշխատանքի տեղավորման կազմակերպման համար՝ բազային տուրքի 100-ապատիկի չափով:  
տարեկան

**Հողված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2011 թվականի հունվարի 1-ից:

### Հիմնավորում

**«Բնակչության զբաղվածության եւ գործազրության դեպքում սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին, «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին եւ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին ՀՀ օրենքների նախագծերի փաթեթի ընդունման անհրաժեշտության**

Նախագծերի փաթեթով առաջարկվող լրացումները նպատակ ունեն օրենսդրորեն կանոնակարգել զբաղվածության ոչ պետական ծառայություններ մատուցող կազմակերպությունների գործառնությունները,

ստեղծել հնարավորություններ զբաղվածության պետական ծառայությունների հետ համագործակցության համար եւ սահմանել դրանց գործունեության նկատմամբ վերահսկողություն:

Համագործակցությունը զբաղվածության ծառայություններ մատուցող պետական եւ մասնավոր կառույցների միջեւ կապահովի առողջ մրցակցություն, արդյունքում բարձրացնելով մատուցվող ծառայությունների որակն ու նրանց միջեւ տվյալների փոխանակումն ու համադրումը, կնպաստի աշխատաշուկայի համակողմանի վերլուծությանը, այդ թվում աշխատուժի տարածքային տեղաշարժերի վերաբերյալ տվյալների հստակեցմանը: Իսկ փոխշահավետ համագործակցություն հնարավոր է միայն մասնավոր կառույցների գործունեության կանոնակարգման, ծառայությունների մատուցման միասնական չափորոշիչների ներդրման ճանապարհով: